ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. օգոստոսի 9 **թիվ 81-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԾԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՌԵԱՆԻՄՈԲԻԼԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱՇՏԱՐԱԿԻ, ԱՊԱՐԱՆԻ, ԹԱԼԻՆԻ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության կառավարության միջև 2010 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված պայմանագրի շրջանակներում շտապ օգնության գծային մեքենաները, շտապ օգնության ռեանիմոբիլները և դրանց օժանդակ սարքավորումները նվիրաբերելու մասին» N874–Ա որոշման 4-րդ կետի պահանջները՝ *կարգադրում եմ.*

1. Աշտարակի, Ապարանի, Թալինի և Ծաղկահովիտի բժշկական կենտրոնների փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝

1)Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության առողջապահական բաժնետիրական ընկերություններին նվիրաբերված Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի N874–Ա որոշման N1 և N2 հավելվածներով նախատեսված շտապ օգնության գծային մեքենաների, շտապ օգնության ռեանիմոբիլի և դրանց օժանդակ սարքավորումների արժեքները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ներդնել՝ Աշտարակի, Ապարանի, Թալինի և Ծաղկահովիտի բժշկական կենտրոնների փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալներում:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա. Բասենցյանի վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ